

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅգԻ
БОТАНИЧЕСКИЙ САД АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բյուլետեն

№ 17, 1959

Бюллетень

Ա. ԱՆԴՐԻԱՑՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից խճուղային ճանապարհների
գլխավոր վարչության գլ. ագրոնոմ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԽՃՈՒՂԻՆԵՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ

Հայտնի է, որ մեր ռեսպուբլիկան աղքատ է անտառային բուսականությամբ: Մասա-
պարզված չեն նրա բնակավայրերն ու ճանապարհները: Բավական է նշել, որ կանաչապատ-
ման ենթակա 1300 կիլոմետր խճուղային ճանապարհներից առ այսօր ծառերով ու թփե-
րով այս կամ այն չափով ձևավորված են միայն 240 կիլոմետր, ըստ որում 1—3 շար-
քանի երկողմանի տնկությունը միայն 170 կիլոմետր, որտեղ տնկված է 250000 ծառ
և թռուի:

Մինչև 1940 թվականը ռեսպուբլիկայում կանաչապարդված է եղել միայն 25 կմ
ճանապարհ այն էլ ցաք ու ցրիվ: Կանաչապատման այդ աշխատանքները կատարվել են
առանց նախադի ու պլանի:

Կանաչապատման ենթակա 1300 կիլոմետրից ոռոգելի ջրով ապահովված է միայն
270 կմ (Արարատյան դաշտավայրը, իջևանի, Ալավերդու, Լենինականի, Կիրովականի
շրջաններում), իսկ մասցած 1030 կիլոմետրը անջրատի է, որի հատկանքով տնկված հազա-
րավոր տնկիները չորացել են: Տնկարկների խնամքը կամ բացակայել է, կամ տարգել է
շատ պրիմիտիվ ձևով:

Որպես տնկանյութ օգտագործվել են այս կամ այն կազմակերպությունից բերված
պատահական տեսակներ, որոնք մեծ մասամբ հեշտ արմատակալվող, բայց ցածրաթիք
ու անորակ են, (ինչպես օրինակ ամերիկական թղկենին): Այդպիսով աչքաթող էին արգում
մեր լավագույն երկարակյաց, դիմացկուն, թանգարժեք, պտղատու և զեկորատիվ տեսակ-
ները, ինչպես օրինակ՝ կաղնին, ընկուգենին և մշտակալար մի շարք տեսակներ: Ման-
րակը կերպով չեն ընտրվել տվյալ հողակիմայական պայմաններում լավ հարմարվող
զիմացկուն տեսակները: Համարյա թե տեղ չի արդեն պտղատու տեսակներին: Դեռ մինչև
օրս էլ շատ մասնագետներ այն սխալ կարծիքին են, որ ճանապարհն եղանակությունը
պտղատու ծառերի տնկումը պետք է սահմանափակել, քանի որ նրանց պաշտպանելը
դժվար է: Ինչ խոսք, որ այս կարծիքը ոչ մի հիմք չունի: Արգեն երեք տարի է, ինչ
Ստեփանյան — Թումանյան խճուղու եղբերին տնկված 3500 պտղատու ծառերը անկո-
րուստ պահպանվում են: Իջևան — Ուզունթալա ճանապարհին տնկված 4 կիլոմետրանոց
հունական ընկուցենու ծառուղին նույնպես պահպանված է: Ուզունթալայից — Ազրբե-
ջանական ՍՍՌ-ի սահմանը գնացող իճուղու 2.5 կիլոմետր տարածության վրա տնկված
3000 սոլրեկներ սկսել է առաջ բերք տալ և ոչ մի կորուսա չենք ունեցել: Եղած փորձից
մենք եկանք այն համոզմունքին, որ եթե պտղատու տեսակները տեղադրվեն, ոչ թե հատ
ու կենտ, բիչ բանակությամբ, այլ մասսայարար, անընդհատ ծառուղիների ձևով, պալա
նրանք կապահպանվեն:

Այդ իսկ տեսակետից սկսած 1956 թվից խճուղային ճանապարհների կա-
նաչապատման աշխատանքներում մտցվեցին մեծ փոփոխություններ՝ այսպես 1956
թվին կանաչապատվեց 30 կիլոմետր ճանապարհ: Տնկված 38000 տունկերից 6000-ը պըտ-
ղատու տեսակներ են: Տունկերը մոտ 95 տոկոսով կապան, նրանց խնամքի աշխատանքնե-
րը կատարվում են ազգությունների համաձայն: 1957 թ. պլանով նախատեսված էր տըն-
կել 40000 տունկ, որից պտղատու 20000 հատ: Այսպիսով երկու տարվա ընթացքում
տնկվեց 26000 պտղատու ծառ՝ նախորդ 35 տարվա ընթացքում տնկված 25000-ի դիմաց:
Այսուհետեւ տնկվելիք բոլոր ծառերի և թփերի մոտ 70—80 տոկոսը լինելու են պտղատու,
որի հատկանքով յուրաքանչյուր տարի մենք կստանանք մեծ քանակությամբ թարմ, քաղ-

ըլլըահամ պտուղներ: Այսուհետև վերջ է տրվելու կանաչապատման աշխատանքների սեղագոնային բնույթին: Մեզ մոտ հաճախ գարնանը կամ աշնանը երիտասարդական կաղմագոնային բնույթին: Մասնաւոր շաբաթօրյակի դուրս զալով մի քանի օրվա ընթացքում տնկում են հաղորավոր ծառերը և խոկոյն մուռանում նրանց խնամքի մասին: Հասկանալի է, որ անկված ծառերը մասով անխնամք չորանում են: Էջմիածնի, Եղեգնաձորի, Հոկտեմբերյանի, Վեդու, Արտաշատի, Գորիսի և Ախուրյանի շրջանների երիտասարդության ու կոլաբորատուսականների ուժեղով անկված 75000 անկիններից 45000 հատը չորացել են:

Խնուղային ճանապարհների նղորաշերտերում տնկված ծառերի պաշտպանության դորդով անհամեցած չափով չեն դրազգում շրջանային դրուզական սովորությունը: Շատ հաճախ կանաչ տարածությունները են ծառերը դիտարկությամբ չայլես, չոկտեմբերյանի շրջանի հայկավան դուզի բնակիչ Ազիլ Կաղմարով պետական ծառաշարքից մեկ գիշերվա մեջ կարում է 10 հատ 8 տարեկան գեղեցիկ բարձրի, կամ Սևանի շրջկենտրոնի կոլտնտեսության նախագահ՝ Ա. Պողոսյանի ուղղակի կարգադրությամբ կարգում են 300 հատ 4 տարեկան զալար ծառեր: Երրջանային կաղմակերպությունները այս արտառոց փաստերին խայում են շատ անտարբերությամբ:

1956 թվականին առաջին անգամ հիմք դրվեց խճուղային ճանապարհների ձյունապաշտպան շերտերի ստեղծման աշխատանքներին: Այժմ արդեն ստեղծվել է 2.5 կիլոմետր ձյունապաշտպան շերտ, որից մեկ կիլոմետրը լինինական—Կիրովական խճուղու Զաջուռի հատվածում, իսկ մեկ և կես կիլոմետր երեսն—Սևան խճուղու Ֆոնտում դուրի հատվածում:

Մեր ռեսուլուրիկայի ճանապարհները անցնում են ծովի մակերեսություն 600—2300 մետր բարձրության, այսպես իշխան—Ռւպունթալա ճանապարհը 600 մետր է բարձր, իսկ Բիշխնակի, Պուշկինոյի և Սեմյոնովկայի լեռնանցքով անցնող խճուղիները ունեն 2000—2300 մետր բարձրություն: Հասկանալի է, որ ձյունապաշտպան շերտեր պետք է ստեղծել այս տեղ, որտեղ ավելի ուժեղ փոթորիկներ են լինում, և որտեղ ճանապարհները ավելի հաճախ են լցվում ձնով: Այդպիսի վայրերը բարձրագիր տեղերն ու լեռնանցքներն են, որտեղ և կիլմայական պայմանները անբարենպաստ են ծառերի աճման համար:

Անհրաժեշտ է ավելի լուրջ և մանրակրիստ կերպով զրազվել այդ վայրերին համապատասխան ծառաթփատեսակների ընտրության և փորձարկման հարցերով: Եթե հաշվի առնենք այս հանդամանքը, որ մենք տնկանյութի կայուն բազա՝ (տնկարան) չունենք, ապա պարզ կլինի նման առաջադրանքի հաջող կատարման գժվարությունը: Այս կարևոր և զժամանակ գործում մեզ զգալի օգնություն է ցույց տալիս Բուռարանական այգին, որը վերջին տարիներին մշակել է սեսպուրլիկայի խճուղիների զենդրոլոգիական ասորտիմենտը և 1948—54 թվականներին ակտիվ մասնակցություն է ցույց տվել Երևան—Սևան խճուղու կանաչապատման փորձնական աշխատանքներին:

Մեծ սիալներից խօսափելու համար, մենք ուշադիր կերպով օգտագործել ենք Երևան—Սևան խճուղու եղրաշերտերի և Սևանի ավաղանի մինչև օրս եղած կանաչապատման փորձը:

Մեր առաջ հրամայական խնդիր է դրված մոտակա մի քանի տարվա ընթացքում ծառապատել Երևան—Սևան խճուղին, ստեղծելով 40 կմ անընդհատ ծառապատված շերտ, դրանով կիսայի ծառակերի մի մասը, որ այժմ կատարվում է այդ խճուղին ձյունալցումից պաշտպանելու համար:

Երևան—Սևան խճուղու եղրաշերտերում պետք է տնկվի 1073700 անկիններ, որից ծառեր 272.000, թփեր 801.700 հատ: Տնկելքը ծառերի և թփերի 75 տոկոսը լինելու է պաղատու: Հիմնականում օգտագործելու են խճորենի, տանձենի, թեղի, լորենի, կանաչական բարդի, սալորենի, բալենի, կարմիր և սրատերև թխի, կեչի, փշատենի, հացենի, սպիտակ ակացիա, սղնի, մասրենի, թաթարական թխի, դեղին ակացիա, չեշխան, մամիենի, ասպիրակ, գերիմաստենի, մորի, մոշի, հաղարճենի, եղենի, սոնի և այլ մշտադալար տեսակներ: Երևան—Սևան խճուղու վրա մի քանի տեղ կառուցվելու են ջրահան կայաններ, որի համար նախատեսված է 1.200000 ռուբլի: Կանաչապատման աշխատանքները պարտվելու են 1965 թվականին:

Կանաչապատման աշխատանքները մեխանիզմներ և զյուղատնտեսական մեքենաներ, որոնց մի մասը ար-

դեն ստացվել են: Անմշակ տարածությունների վրա ծառատունկ կատարելու անցյալ տարբիների բացասական արգյունքը նկատ ունենալով, ալժմ հրաժարվել ենք այդ ձեից:

Նախքան տնկումը հողամասը խոր զարում ենք, փոցխում և մաքրում մոլխոստերի արմատներից: Տնկելուց հետո միշ ծառային և միջաբարձրացնեն տարածությունը պահպելու է ու ցելի վիճակում մինչև որ ծառերն ու թփերը լրիվ սովորածածկեն հողամասը:

Կանաչապատման աշխատանքներին մեծ չափով խոչընդուն են հանգիսանում այդ ֆրոնտում աշխատողների մասնագիտական ցածր պատրաստականությունը: Այդ բացը ծածկելու համար նախատեսվում է խճռուղիների զլիավոր վարչության աշխատողների համար կազմակերպել կարճատև դասընթացներ:

Գետը է խճռուղի Բուսաբանական ինստիտուտին, որ մեզ օգնելու նպատակով, հայերեն լեզվով մի բրոշյուր հրատարակի խճռուղիների ծառապատման վերաբերյալ:

Մենք կարծում ենք, որ եթե պետական հիմնարկները և Հայկական ՍՍԸ-ի Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական ինստիտուտը ավելի մոռիկից զրադվեն ռեսպուբլիկայի խճռուղիների կանաչապատման գործով և կոնկրետ օգնություն ցույց տան, ապա հնարավորություն կլինի ավելի կարճ ժամանակում և ավելի արդյունավետ կերպով կատարելու մեջ առաջարկած խճռուղիները:

